


ՀԱՅԿԱՆ ՍՈՒ ԼՈՒԺՈՂՎԱՐՄԱՏ

ԵՐԱԳՐԵՐ
ՄԻԶԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ

ԲԻՈԼՈԳԻԱ
ԳԵՈԼՈԳԻԱ
ՄԻՆԵՐԱԼՈԳԻԱ



ԼՐԿՈՎԱԾ

ՃՇՌԵՎՈՐ

1940

21.

20 JUL 2010

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒ ԼՈՒՇՈՂԱԾԱՑ

57(07)

5-98

Ա.Ա.

ԵՐԱԳՐԵՐ
ՄԻԶՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՔ

ԲԻՈԼՈԳԻԱ
ԳԵՈԼՈԳԻԱ
ՄԻՆԵՐԱԼՈԳԻԱ



12-725

16.05.2013



3245
40

Խմբագիր՝ Ա. Դավթիելյան
«Դարձինի հիմունքները» ծրագրը խմբագրել և Ս. Թաղեկոսյանը
Տեսք. Խմբագիր՝ Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Կոնտրոլ սրբագրիչ՝ Մ. ՊԱՐՈՒՆԻՑՅԱՆ
Հանձնված ե արտադրության 1940 թ. ոգոսառական 19-ին
Ստորագրված ե տպագրության 1940 թ. սեպտեմբերի 2-ին
Վ. Շ. 702, հրատ. № 52, պատվեր № 198 ամիսաւ 2000

Խուսափած առաջան, Ցեղան, Տեղան 127

Բ Ի Ռ Ա Ռ Գ Ի Ա*)

Բիոլոգիայի դասընթացի խնդիրները

Բիոլոգիայի դասավանդումը սիջնակարգ դպրոցներում պետք է հետամուտ լինի հետեւյալ խնդիրներին.

ա) տալ բույսերի և կենդանիների մորֆոլոգիայի, անատոմիայի, ֆիզիոլոգիայի և սիստեմատիկայի բնագավառից այնպիսի գիտելիքներ, վորոնք անհրաժեշտ են որգանիզմի զարգացման հիմնական որինաչափությունները հասկանալու, ինչպես և մարդու անատոմիայի ու ֆիզիոլոգիայի և որգանական աշխարհի զարգացման թեորիայի հիմունքները հետագայում յուրացնելու համար.

բ) բաց անել աշակերտների առաջ բուսական ու կենդանական որգանիզմների կյանքի պրոցեսների նյութականությունը և գիտական-մատերիալիստական աշխարհը բանումը հակադրել կենդանի բնության նկատմամբ յեղած կրոնա-բիուստական հայացքներին. Կոնկրետ կերպով ցույց տալ որգանի կառուցվածքի կազմը ֆունկցիայի հետ, որգանիզմինը՝ շրջապատող միջավայրի հետ: Ցույց տալ կենդանի որգանիզմի յուրահատկությունը. գաղափար տալ բջջի և որգանիզմի բջջային կառուցվածքի մասին, ծանոթացնել համեմատական անատոմիայի, սաղմնաբանության և հներաբանության բնագավառից վերցրած տարրական յերկույթների հետ. տալ տարրական պատկերացում որդանական աշխարհի պատմական զարգացման մասին: Հենց գրանով կտրվի անհրաժեշտ նյութ կրոնական նախապաշարմունքների ու սնուտիսպաշտությունների գեմ անհրաժեշտ պայքար մղելու և բնության նկատմամբ մարքսիստական հայացք մշակելու համար.

* Ծրագիրը վերանայված և ուղղված է ՌԽՖՍՀ Լուսժողկոմատի դըպրոցների Պետական գիտա-հետազոտական ինստիտուտի բնագիտական հարինեական աշխատակենական գլուխական թ. Վ. Վահագյանի կողմէ, Մ. Ի. Մելքոնյանի կողմէ, Ե. Ա. Ֆրեյբերգի, Մ. Յ. Յուրենի կողմէ:

գ) ցույց տալ, թե ինչպիս մարդը հերդությունը և բույսի և կենդանու վրա, ինչպես նա որդանիզմի ղարգացման որինաչափությունները զիտենալու հիման վրա տիրապետում ե բույսի և կենդանու բնությանը և թե ինչպիսի հոկայական հեռանկարներ են բացվում բուսաբուծության, կենդանաբուծության, ձկնաբուծության մեջ ու սոցիալիստական տնտեսության մյուս ճյուղերում «որդանիզմը ղեկավարելու» այդ ձանապարհին Միջուրինի, Լիսենկոյի, ԽՍՀՄ-ի գիտահետազոտական հիմնարկների աշխատանքի որինակով ցույց տալ գիտության հաջողությունները:

Բիոլոգիայի պարագմունքների պլոցեսում մանկավարժը պարտավոր ե.

ա) տալ աշակերտներին բույսերի և կենդանիների վրա ղետառզություն ու փորձեր կատարելու սկզբնական ունակությունները և սովորեցնի հաստատել իրենց դիտողությունները նկարներով, գրառումներով և կողեկցիաներով, սիստեմատիկար յերեխաներին վարժեցնելով ինքնուրույն աշխատանքի.

բ) սովորեցնել աշխատել դասադրքի և գրքի վրա, գիտակարար յուրացնել անցած նյութը.

գ) սովորեցնել զիտակցորեն կիրառել բիոլոգիան ուսումնակրելիս ստացված զիտնիքները գյուղատնտեսական պրակտիկայում, սանիտարիայում և առողջապահության մեջ:

Գիտելիքների սիստեմը

Բիոլոգիային վերաբերող զիտելիքների սիստեմը միջնակարգ գպրոցում կառուցվում և այսպիսի հետեղողականությամբ. տարրական գպրոցում բնագիտության տարրական ընդհանուր դասընթացից հետո, վորոն իր մեջ տեղեկություններ և պարունակում անորդանական և որդանական բնությունից (ֆիզիկայի, քիմիայի, միներալոգիայի և բիոլոգիայի տարրերը), V դասարանից սկսած տրվում են ընական զիտությունների բուսաբանության, կենդանաբանության, անատոմիայի և ֆիզիոլոգիայի, և վոլյուցիոն ուսմունքի հիմունքները:

1. Բիոլոգիայի գասընթացն սկսվում ե բուսաբանությամբ, այսինքն՝ բուսական որդանիզմի անատոմիական-ֆիզիոլոգիական աեսությամբ և բույսերի սիստեմատիկայի հիմունքներով:

Վանդինս տրվում ե նկատմական լուսաբանությամբ: Բուսաբանությամբ զրադշում են V դասարանը և VII դասարանի առաջին կիսամյակը, Ֆիզիոլոգիական հիմնական պրոցեսների վերլուծությունը կապվում է բուսաբուծության պրակտիկայի զիտական հիմունքների պարզաբանության հետ: Այս մոմենտը չափազանց կարևոր և վորպես թերիան պրակտիկայի հետ կապելու մոմենտ: Ուստի ծրագրերում սոցիալիստական շինարարության վերաբերյալ այնպիսի նյութ ե արվում, զոր մատչելի յե աշակերտների ըմբռնողությանը:

2. Բուսաբանությանը հետևում է կենդանաբանության գասընթացը, վորտեղ տրվում են կենդանիների կարևորագույն խմբերի բնական գրակարգման հիմունքները (VII դասարանում յերկրորդ կիսամյակում և VII դասարանում): Այդ դասընթացը տոգորված է եվոլյուցիոն գաղափարով, վարի կապակցությամբ նրանում մեծ տեղ և բանում սովորողների ըմբռնմանը մատչելի անատոմիա-ֆիզիոլոգիական համեմատական նյութը, հնեաբանական և ընդհանուր ընդունական եվոլյուցիոն նյութը: Որդանական (մասնավորապես կենդանական) աշխարհի պատմական զարգացման գաղափարն ավելի լավ յուրացնել տալու համար դասընթացում քննարկվում են կենդանական աշխարհի այդ անսակետից կարևորագույն և զրա հետ մեկտեղ կոնկրետ ծանոթության համար ամենից ավելի մատչելի խմբերը՝ սկսած միաբջիջներից և վերջացրած պրիմատներով: Յեզրափակիչ գլխում VII դասարանում առաջուց ուսումնասիրած նյութի հիման վրա հետեւ վություններ են արվում որդանիզմների եվոլյուցիայի հիմնական որինաչափությունների մասին և ճշտվում (տարրական ձևով) փոփոխականության, ժառանգականության, գոյության կովի, ընտրության վերաբերյալ գաղափարները: Կենդանաբանության դասընթացում, թեմատիկայի հետ սերտորեն կապված պարզաբանվում են սոցիալիստական տնտեսության մի շարք կարևորագույն պրակտիկ հարցեր, որինական պարագիտների և գյուղատնտեսական մշասատուների դեմ պայքարելու բիոլոգիական հիմունքները, ձկնաբուծության, թուչնաբուծության, կենդանաբուծության և ընտանի կենդանիների նոր ցեղեր առաջացնելու գիտական հիմունքները:

3. VIII դասարաններում տրվում ե մարդու անատոմիայի և ֆիզիոլոգիայի գասընթացը, վոր քննարկում և մարդու անատոմիական-ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, կապ-

ված նրա մշխատահաքային գործունելության հետ։ Այդ դասընթացը հանդիսանում է կենդանաբանության դասընթացի բնական շարունակությունը և զգալի չափով հենվում է այն գիտելիքների վրա, վոր աշակերտները VII դասարանում ստացել են քիմիայից։ Դրա հետ միասին նա նյութ և տալիս, վորն անհրաժեշտ և հետեւալ տարին, «Դարվինիզմի հիմունքներ» դասընթացում մարդու ծագման վերաբերյալ հարցն ավելի լավ յուշնելու համար։

4. IX դասարանում ուսումնասիրվում են եվոլյուցիոն ռեսմունքի հիմունքները։

Հակակրոնական դասիարակուրյունը բիոլոգիայի դասերին

Այսնից ավելի ճիշտ պետք է համարել բիոլոգիայի դասերին հակարոնական դաստիարակության հետեւալ գրվածքը. նախ հարկավոր և կոնկրետ, վառ որինակներով մատերիալիստական աշխարհը մը բունումը հակադրել բնության յերեւոյթների կրոնաբղեծական մեկնաբանությանը, յերկրորդ՝ հարկավոր և որինակներ բերել զիտության դեմ կրոնի մղած պայքարի պատմությունից, ցույց տալ յեկեղեցին վորպես ճնշման գործիք, վորպես խեղիչ՝ մարդկային առաջաղիմության, վորպես արգելակ գիտության գարգացման գործում։

Բնության յերեւոյթների մատերիալիստական բոցատրությունը կրոնաբղեծական հակադրել կարելի յե և հարկավոր և կատարել բիոլոգիայի ծրագրի յուրաքանչուր բաժնում։ Այսպէս՝ V դասարանի բուսաբանության դասընթացում բույսի, ուսումնասիրման հիմնական խնդիրը հանդիսանում է ցույց տալ թե բույսը կենդանի որդանիզմ և, ըջջային կազմություն ունի, զարգանում և սերմից, սնվում և հողից և ողից, չնշում և, բաղմանում և այլն, և վոր բույսի բոլոր կենսական պրոցեսները նյութական են։

Մեր խնդիրն ե՝ սերմի վերաբերմամբ կրոնաբղեծական դաստիարական հայացքին հակադրել մատերիալիստական ուսումնաքը սերմի զարգացման մասին, վոր տեղի յե ունինում վորոշ արտաքին ֆակտորների ջերմության, խոնավության, ողի թթվածնի արդեցության տակ։ Արմատի և տերեկի ուսումնասիրության ժամանակ նույնպես կարելի յե սնման պրոցեսների մատերիալիստա-

կան բացատրությունը հակադրել իդեալիստական այն ուսմունքին՝ կենսական ուժի մասին, վորի ազդեցության տակ, իբր թե, բույսը վերամշակում է հողի հատուկ նյութերը, «հումուսը», այնպիսի մի նյութ, վորից կազմված է բույսի մարմինը։ Ասսիմիլացիան ուսումնասիրելիս պետք է ընդգծել, վոր վոչ մի առանձին կենսական ուժ չկա, այլ վոր ուսան առաջանում է բույսերի կանաչ տերեներում արնգակի լույսի ազդեցության տակ։

Բույսերի և կենդանիների սիստեմատիկան ուսումնասիրելիս անհրաժեշտ է կոնկրետ որինակներով ցույց տալ որդանիզմների փոփոխականակությունը և որդանական աշխարհի զարգացման դիտական հայացքը հակադրել կենդանական ու բուսական աշխարհի անփոփոխության և մշտակայության կրոնի ուսմունքը։

Բրածո որդանիզմների վորոշ մնացորդներն ուսումնասիրելիս պետք է գիտության տվյալները հակադրել կրոնի այն անհեթեթ հայացքին, թե մեռած կենդանիների մնացորդները համաշխարհային ջրհեղեղի արդյունք են կամ յուրահատուկ «ծախսքեր» են աստծու ստեղծագործական «զործունելյության» մեջ, վոր հենց իր ստեղծած, «իրեն՝ դուք չեկած» կենդանիներին քարածոներ և զարձրել. վերջապես, ցույց տալ կյուվեյի աշակերտների հետեւության անհեթեթությունը՝ համաշխարհային կատաստրոփների և բազմիցս տեղի ունեցած արարչագործական ակտերի մասին։

Մարդու անսատումիայի և փիզիոլոգիայի դասընթացի մեջ կազմության և փիզիոլոգիական պրոցեսների տվյալների հիման վրա պետք է մերկացնել կրոնի ուսմունքը մարդու հատուկ աստվածային ծագման մասին, նրա հոգու մասին, հարության մասին, նյարդային խանգարման մասին՝ վորպես արդյունք չար վուգու զավերի, համաձարակների և ուրիշ հիվանդությունների մասին՝ վորպես աստծու պատիժների։ Կետք և ցույց տալ, թե կրոնն ու յեկեղեցին ինչ հակայական վասա են հասցըրել մարդկությանը, զիտության մարդկանց վորքան լուսավոր կյանքեր են վոչնչացրել, մեղադրելով զիտականներին հերետիկոսության մեջ, ինչպես զրանք ժողովրդին «Փրկել» են հիվանդություններից հմայումների, աղոթքների միջոցով, ընդունին խախտերով առողջապահության և սանհիտարիայի տարրածական պահանջները։

Վերջապես, եվոլյուցիոն ուսմունքի դասընթացում ուսանձնապես համոզիչ յեղանակով պետք է ցույց տրվի իսկական գիտության պայքարը յերկու ճակատով՝ իդեալիզմի գեմ և մեխանիստական մատերիալիզմի դեմ։

Բույսերն ու կենդանիներն ուսումնասիրելու ժամանակ պետք եւ ամեն կելալ մերկացնել աստվածաշնչի առասպեկլն այն մասին, թե աստված ամեն ինչ ստեղծել եւ օր պետք մարդու, վորպես ստեղծագործության պատկից։ Սերմերը, արմատապտուղները, պալարապտուղները, տքանչելի ծաղիկները և պտուղները ստեղծել են հենց աշխատավոր մարդը՝ ճանաչելով բնությունը, նրա որենքները, բույսերի և կենդանիների բիոլոգիական հարմարումները շրջապատող միջավայրին։ Զբային, չոր տեղերի կյանքի բիոզուգության հարժարանքների, փոշուման, բեղմանալորման և ուրիշ բազմաթիվ հարմարանքների որինակներն այնքան շատ են թե բուսաբանության և թե կենդանաբանության դասընթացում, վոր հնարավորություն կտան հեշտությամբ քողազերծ անելու աստվածաշնչի արարչագործական հեքիաթն այն մասին, թե ուստակար բույսերն ու կենդանիները մարդու համար են ստեղծվել, ինչպես և մնասակարներն իրենց հերթին աստծու կողմից են ստեղծված իպատիք մարդուն նրա «մեղքերի համար»։

Հիվանդաբեր միկրոռգանիզմների բիոլոգիան, պարագիտորդուի, մասամբ միջատների և այլ մասամբար կենդանիների բիոլոգիան մերկացնում եւ տերտերական այն հեքիաթները, թե որանք աստվածային պատիք են մարդու համար։ Գիտելիքներով և տեխնիկայով զինված մարդը հաղթահարում եւ բնությանը նրան իր նպատակների համար ձևափոխում և դրանով վերջնաշկանապես քողազերծ անում կրոնա-իդեալիստական աշխարհայցքը, վորն ստեղծված և տիրող դասակարգերի կողմից հարստահարման նպատակներով։

Բուսաբանության, կենդանաբանության, անատոմիայի՝ և ֆիզիոլոգիայի, եվոլյուցիոն ուսմունքի դասավանդման ժամանակ պետք եւ ամեն մի հարմար առիթից ոգտվել՝ ցույց տալու համար, վոր գիտության, մատերիալիզմի հաղթանակը կրոնի և իդեալիզմի դեմ՝ հեշտությամբ չի ձևոք բերվել։ Մարդկության պատմությունը լի յե ահավոր հջերով, վորոնք վկայում են գիտության մարդկանց, նրա անձնազո՞ն մարտնչողների ու հերոսների վերաբերմաք յեկեղեցական խավարամրության, տիրող դասակարգերի՝ կենդեքողների գործադրած վայրենի բռնության մասին։ Գիտության դեմ կրոնի մղած պայքարի վաստերն ուսուցիչը կարող է քաղել այնպիսի գրքերից, ինչպիսիք պրոֆ. Վ. Վ. Լունկուիչի «հերակլիտից մինչև Փարվիս», Դաննեմանի «Բնադի-

տության պատմությունը», Ե. Դ. Ռեայտի «Կըոնի պայքարը կից թյան գեմը և այլն դրական են»*): Արտազասաբանական ընթերցանության համար սովորողները պետք եւ ողտագործեն 1937 թվին լույս ահատծ վորպես կայուն դասագրքերը՝ լրացնող հետեւյալ գրքերը, Բ. Վ. Վահակյանուկի, Վ. Ն. Վուշեաիչ, Ի. Վ. Կողբը՝ «Դիտություն բռնյակերի մասին և կրօնը», և Մ. Յա. Ցուղմեր, Ն. Ն. Պլավիլչիկով, Ա. Ա. Պարամոնով՝ «Դիտություն կենդանիների մասին և կրօնը»։

Հարկավոր եւ դաստիարակել մեր աշակերտների մեջ հարգանք դեպի գիտությունը, ցույց տալ գիտության հսկայական նշանակությունը մարդկության մղած պայքարում իր աշատագրության համար։ Հարկավոր եւ հպարտության զգացմունք դաստիարակել դեպի մեր հայրենիքը, վորտեղ զիտությունը վարթած ծաղկում եւ ստացել Հարկավոր եւ, վոր մեր աշակերտներն իմանան այնպիսի անուններ, ինչպես Կ. Ա. Տիմիրյագեվ, Ի. Պ. Պավլով, Ի. Վ. Միջուրին, Տ. Տ. Լիսենկո, վորպեսն նրանք գիտենան, թե ինչ հըսկայական հոգատարություն և ոգնություն են ցույց տալիս մեր յերկրում գիտության զարգացմանը՝ կուսակցությունը, կառավարությունը և անձամբ ընկեր Ստալինը։

Աշխատանիի մերողները՝

Բիոլոգիայի վերաբերյալ գիտելիքներն աշակերտներին ավելի լավ և ավելի հիմնավոր յուրացնել տալու համար դասառու պարտավոր եւ ծրագրային նյութի բովանդակությունը սիստեմատիկայի և հետեւյականորեն շարադրելու պլրոցեսում կազմակերպել լաբորատոր փորձնական պարագամունքներ՝ կենդանիների անդամաներներ, միկրոսկոպիկական գիտություններ, բույսերի և կենդանիների վրա գիտողություններ կենդանին անկյունում և բնության մեջ։ Դասատուն պետք եւ մի շարք եքսկուրսիաներ կատարի դեպի բնություն, գյուղատնտեսական արտադրություն, գործարան, թանգարան, նա պետք եւ կազմակերպի գործնական պարագմունքներ դպրոցին կից հողամասում կամ շրջանային ագրոբազմում, Դասատուն պետք եւ սովորի կենդանի, հետաքրքրա-

*) Անհրաժեշտ է քննազատորեն մօտենալ ամերիկական գիտական Ուայտի սկզբունքային արտահայտություններին, վորը իր, ընդհանուր առմամբ հետաքրքիր զրքի վորոշ տեղերում ձգտում է հաշտեցնել կրոնը և գիտությունը։

կան գրուցներ անել դասի ժամանակ, ոգտագործել դասագիրքը և ընթերցանության գիրքը, փորձերի դևոնստրացիան, հավաքածուները, բազմազան դիտողական պիտույքները, բաշխման բնական նյութը, պրոեկցիոն լապտերը, կինոն և այլն՝ գիտելիքը ները խորացնելու, ընդարձակելու և ամրապնդելու համարու Միայն զանազանակերպ միջոցներ ոգտագործելու բիոլոգիայի դասառուն կկատարի այն խնդիրները, վորոնք զրված են խորհրդային դըտրոցում բիոլոգիայի դասընթացի առջև:

Հենց այդ նպատակներով ել պետք ե խթանել աշակերտաների ինքնուրույն աշխատանքները՝ կազմակերպելով պատասխի ընտակերի, պատանի փորձարարների (բուսաբույծների, անասերների), պատանի փորձարարների (բուսաբույծների, անասերույծների), բնության պատանի հետախույզների խմբակներ, ամեն կերպ ոգնելով նրանց՝ լայնորեն գործադրելու փորձերն ու պիտողությունները և բիոլոգիական հավաքածուներ կազմելու

Մեծ նշանակություն են ստանում աշակերտաների ամառային ինքնուրույն դիտողություններն ու աշխատանքները բնության մեջ և դպրոցական հողամասում:

Գիտասուն պետք ե նախապես գրանք պատրաստի: Ամառ ժամանակ մատչելի ե հետաքրքրական դիտողություններ կատարելու համար պարզ առաջադրությունները կոգնին աշխարտներին՝ ծանոթանալու բնության այնպիսի յերեսութների հետ, վորոնք դպրոցական աշխատանքի պայմաններում հաճախ անմատչելի յեն անմիջական ծանոթության համար: Ամառը ճամբարչներում, գյուղերում կամ դպրոցամերձ հողամասում աշակերտները շատ արժեքավոր դիտողություններ, գրառումներ ու նկարներ կատարելու միավանական արժեքավոր հովաքածուներ: Աշնանն անհրական և կլազմեն արժեքավոր հովաքածուներ: Ամենից առաջ ամեառը կատարած աշխատանքն ամփոփել, իսկ հավաքած և մշակած նյութը ձեռվորել վորպես ամառային աշխատանքների ցուցահանդես: Հենց այդ նյութն ել պետք կը հետագա լաբորատոր պարապմունքների համար:

Գրա հետ միասին անհրաժեշտ ե ամենակարճ ժամանակում վերացնել դասավանդման մեթոդներում յեղած այն խեղաթյուրութները, վորոնք դեռևս տեղ ունեն դպրոցում: Ամենից առաջ անհրաժեշտ ե վճռական պայքար մեղել բիոլոգիայի բանագործքային գառավանդան դեմ, վորը գիտությունը կտրում ե կյանքից և սոցիալիստական շինարարությունից:

Աւումնական միջոցները համար անհրաժեշտ ե դիոլոգիայի դասավանդման ճիշտ դրման համար անհրաժեշտ ե պարունակության կից ունենալ բիոլոգիական լաբորատորի գործիքներով ու նյութերով համապատասխանողեն սարքավորված: Բիոլոգիայի դասառում աշակերտների ողնությամբ պետք ե ժամանակին պատրաստի զործնական աշխատանքների նյութը (սերմեր, հողի նմուշներ, զանազան բույսերի հերբարիումներ, բույսերի մասեր, միջատներ, մանր կենդանիների, քարածուների հավաքածուներ և այլն):

Բիոլոգիական լաբորատորիայի անհրաժեշտ բաղադրիչ մասն ե կենդանի անկյունը: Տեսական փորձեր ու դիտողություններ կատարելու համար՝ այդպես պետք ե լինեն կենդանի բույսեր (կուտուրական, սենյակի և վայրի), ակվարիումներ, տերարիումներ, ինսեկտարիումներ և վոլյերներ՝ կենդանիների համար կենդանի անկյունը կազմակերպելու և պահելու համար, նրանում տեսական դիտողություններ ու փորձեր դնելու համար հարկավոր ե գրանքել հետաքրքրվող աշակերտների՝ պատասխի բնասերների մի խումբ:

Բացի գրանքից, գպրոցը պետք ե ունենալ բացության լաբորատորիա՝ դպրոցին կից ուսումնական հողամաս: Վորտեղ զպրոցներին կից հողամասեր չկան, պետք ե մի քանի դպրոցներ միանան ընդհանուր շրջանային կամ յենթաշրջանային ազգարարական ստեղծելու համար: Դպրոցին կից հողամասում հավաքվում են բուսաբանության և դարվինիզմի հիմունքների պարապմունքների համար հարկավոր բույսեր, աճեցվում են բուսամասիրվող ընտանիքների ներկայացուցիչներ, փորձեր են գրվում գյուղատնտեսական բույսերի և կենդանիների վրա, կատարվում ե պատվաստում, սրսկութիւնը, խաչառում, ընտրություն, յարովիղացիա, կատարվում են բիոլոգիական դիտողություններ:

Գրանանը և աշնանը աշխատանքները կենտրոնացվում են գլխավորապես բուսաբուծական հողամասում, իսկ կենդանիների վրա աշխատանքը կարող է կատարվել ամբողջ տարվա ընթացքում (ճագարներ, ընտանի թուչուն, լաբորատոր կենդանիներ և այլն):

Հենց այստեղ է կենտրոնացվում ամենից ավելի հետաքրքրվող աշակերտների պատասխի փորձարարների, արտադրապ-

բոցական ինքնուրույն աշխարհանքը։ Առանձին նշանակություն ունի նա աշակերտների կողմից կատարվելիք ամառային առաջադրությունների համար։ Բիոլոգ-դասատուն զպրոցական հողամասում աշխատանքն այնպես պետք եւ կազմակերպի, վոր յերեխաների համար հետաքրքիր լինի։

Դպրոցական եքսկուրսիաներն ավելի եֆֆեկտիվ դարձնելու համար դասատուն պետք եւ կապվի մոտակա գյուղատնտեսական ձեռնարկությունների հետ, տեղական թանգարանների, լարորատորիաների և հետազոտական հիմնարկների հետ։ Այդ առանձնապես անհրաժեշտ եւ լաբորատոր աշխատանքի այնպիսի տեսակները գույք բերելու համար, վորոնք մասսայական գովրոցի պայմաններում սակավ մատչելի յեն։ Այսպես որինակ՝ կազմվարորդիայի հետ հնարավորություն կտա միկրոսկոպիական պարագմունքներ կազմակերպելու (հաճախ գործոցում միկրոսկոպ չի լինում)։ Մի շարք արտադրական ձեռնարկություններում և հետազոտական հիմնարկներում կարելի յեւ դեմոնստրացիայի և լաբորատոր մշակման համար նյութ ստանալ (բամբակի և ուրիշ թելատու բույսերի նմուշներ, գաղանների սորթիներ, բուրդ հումքի և կիսաֆարբիկատների քաղմազան տեսակներ, կողանտեսություններ պատրաստելու ժամանակ)։

Դասատուն պետք եւ լավ ուսումնասիրի բնական և գյուղատնտեսական շըջակայքը, վորպեսզի այն առավելագույն չափով ոգտագործի եքսկուրսիաների և անհրաժեշտ դիտողական պիտույքներ պատրաստելու ժամանակ։

Մեծ ուսումնագաստիարակչական նշանակություն ունի զպրոցական կինոն՝ ծրագրի թեմատիկային համապատասխան ընարքած նկարներով։

Այստեղ, վարեկենարավոր եւ, պետք եւ ոգտադործել պրոեկտին լավուրը և ալբուկովը՝ գիտադրություններ ցուցադրելու համար։

ԾՐԱԳԻՐ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (78 Ժամ)

(Ներածություն 1 Ժամ)

Բուսաբանությունը գիտություն և բույսերի կազմության և կյանքի մասին Բույսերի կյանքի գիտության նշանակությունը սատերիալիստական աշխարհը բռնման համար։ Բուսաբանությունը ի սպաս սոցիալիստական շինարարությանը

I. Ընդհանուր ծանրություն ծարկավոր բույսերի ներ (5 Ժամ)

Ծաղկավոր բույսերի որգանները՝ արմատ, ցողուն, տերև, ծաղիկ։

Բույսերի բջջային կազմությունը՝ Գաղափար բուսական բջջի մասին (թալանթ, պրոտոսպազմա, կորիզ, բջջանյութ, վակուուներ)։ Գաղափար հյուսվածքի մասին։

Լաբորատոր պարագաներ (1) ուսումնասիրություն ծաղկավոր բույսերի արտաքին կազմության, (2) ծանրություն բույսերի բջջային կազմության հետ (աշխատանք խոշորացույցով),

Դեմոնստրացիա՝ բուսական բջիջը և հյուսվածքները միկրոսկոպի տակ (սոխի թեփուկի վերնամաշկը)։

Եքսկուրսիա՝ ծաղկավոր բույսերի մասին ընդհանուր ծանթություն ունենալու համար։

II. Աերմը, նրա ծրումը յև սերմերի նախայաւահումը ցանեսի համար (15 Ժամ)

Միաշաքիլ և յերկշաքիլ բույսերի սերմերի կազմությունը՝ Աերմերի բաղկացությունը (ոսլա, սպիտակուց, ճարպ, ջուր,

հանքային նյութեր): Սերմի և նրա մասերի վոփոխությունը ծիլու ժամանակ: Մնադարար նյութերի նշանակությունը բույսերի զարգացման համար: Զանազան բույսերի սերմերի ծլման համար անհրաժեշտ պայմանները—խոնավություն, ջերմություն, ողի թթվածին: Սերմի ծլման պըռ ցեսի նյութականությունը:

Ծլող սերմերի շնչառությունը:

Սերմացուի աղբոտությունը և ծլունակությունը վորոշելու նշանակությունը բերքի բարձրացման համար մղվող պայքարում: Սերմն որհնելու յիկեղեցական ծեսի անհեթեթությունը և վկասը:

Լաբորատոր պարագմունքներ: 1) ծանոթություն միաշաքիլ և յերկշաքիլ բույսերի սերմերի կազմության հետ: 2) ալյուրի պարզ անալիզը (ուլայի, սպիտակուցի և ճարպի զատումը):

Եխկուրսիոն դեպի տեղական թանգարանի գյուղատնտեսական բաժինը կազմուղատնտեսական փորձնական կայան կամ խորհուտնեսություն և կոլտնտեսություն՝ ծանոթանալու սերմի դաման և տեսակափորման հետ:

Դիտողություններ կենդանի անկյունում և տանը: 1) սերմերի ծլեցումը և ծլունակության տոկոսը վորոշելը: 2) դիտողություններ ծլի զարգացման վրա:

III. Արմատ: Բույսերի սենդառությունը հողից: Հողի վրա ազդելը գյուղատնտեսության մեջ (12 ժամ)

Հողի համառոտ բնութագիրը՝ վորպես միջավայր կանաչ բույսերի զարգացման համար:

Արմատի արտաքին կազմությունը: Արմատի ծայրապատճանը և մազարմատները: Արմատային սիստեմների տիպերը:

Արմատի ներքին կազմությունը: Մազարմատի միկրոսկոպային կազմությունը: Արմատի աճը: Արմատի աճման տեղամասը (գոնան): Աճման նշանակությունը: Արմատի շնչառությունը: Արմատի լուծող ազդեցությունը: Դազափար սոմոսի մասին: Զըրի և հանքային սննդարար աղերի մուտքն արմատի մեջ հողից: Փորձեր, վորոնք պարզաբանում են, թե ինչպիսի նյութեր հատկապես անհրաժեշտ են բույսի հաջող զարգացման համար: Ազոտ, ֆոսֆոր և կալիում պարունակող հանքային նյութերը: Գաղափար ջրային և ափազային կուլտուրաների մա-

սին: Հողի պարարտացման և մշակման նշանակությունը բերքերարացման գործում: Բերքը աստծուց կախված լինելու կրոնական հայացքների հերքումը:

Լաբորատոր պարագմունքները: ծանոթություն ձողաձեւ և փնջաձեւ արմատների հետ:

Արմատների և մազարմատների կազմության ցուցադրումը միկրոսկոպով: Հեղուկների սամոսի փորձի ցուցադրումը:

Դիտողություններ կենդանի գանգաման արմատի աճման վրա: Փորձադրումներ ջրային և ավաղային կուլտուրաների:

IV. Տերեփ: Սենդառություն ողից: Ջրի գոլորշացումը Տերեփների միջոցով (14 ժամ)

Ողի բաղադրությունը՝ թթվածին, աղոտ և ածխաթթու գաղ, սրանց հատկությունները:

Տերեփների գերը բույսերի սննդառության գործում: Տերեփների արմատաքին կազմությունը: Տերեփների դասավորությունը: Զղավորության տիպերը: Տերեփների ձեռքը: Տերեփների բըջային կազմությունը: Տերեփի հյուսվածքները՝ մաշկ, հերձանցքներ, սյունաձեւ և սպունգաձեւ հյուսվածք, միջբջջային անցքեր, անոթաթելային խորձեր: Քրորոֆիլային հատիկներ: Ածխաթթու գաղի աարալուծումը կանաչ բույսերի կողմից լույսի տակ: Ածխածնի յուրացումը տերեփների կողմից: Ածխածնի յուրացման արդյունքները (ածխաջրեր—ոսլա, շաքար): Լույսի և քլորոֆիլի հատիկների գերը ոսլա առաջացնելու գործում: Կանաչ բույսերի ժողովրդաւոնտեսական նշանակությունը

Ջրի գոլորշիացումը բույսերի միջոցով: Գոլորշիացման կանոնավորման հարմարվելը: Բույսերի շնչառությունը: Շնչառության հատուկ որգանների բացակայությունը բույսերի մոտ:

Դեմոնստրացիա: 1) փորձեր, վորոնք պարզում են թթվածնի և ածխաթթու զաղի հատկությունները: 2) տերեփի միկրոսկոպիկ կառուցվածքը: 3) լույսի տակ կանաչ բույսի կողմից թթվածին արտադրելու փորձեր: 4) լույսի տակ տերեփների մեջ ոսլա առաջացնելու փորձեր:

Լաբորատոր աշխատանք: տերեփի ձեռքի և զղավորման ուսումնառարկություն:

Դիտողություններ կհնդանի անկյունում և տաճքը բույսերի միջոցով ջուրը գոլորշիացնելու փորձերի վերաբերմամբ:

V. Ցողուն: Զրի յեվ սենդարար նյութերի տեղափոխությունը ցողունի միջոցով (11 ժամ)

Շիվ: Բողբոշների դասավորությունն ու կազմությունը՝ Շիվ զարգացումը բողբոշից: Ծառի աճը դեպի վեր: Ցողունի մակրոսկոպիկ կազմությունը (ծառաբույսերի նյութերով՝ կեղե, բընափայտ, միջուկ), Յերկշաքիլ բույսերի ցողունի միկրոսկոպային կազմությունը: Անոթաթելային խուրձեր՝ փայտանյութը, կամրիոն: Ծառի աճումը հաստությամբ: Կամրիոնի նշանակությունը: Միաշաքիլ բույսերի ցողունների կազմության առանձնահատկությունները:

Ցողունի գերը բույսի կյանքում: Վերելակ հոսանք: Զրի գոլորշիացումը տերենների միջոցով և արմատային ճնշման նըշանակությունը վերելակ հոսանք առաջացնելու դործում: Վարելակ հոսանք:

Ցողունների ձետիկությունները՝ կոճղարմատներ, պալարներ, կոճղեղներ, նրանց կառուցվածքը և բիոլոգիական նշանակությունը: Վերերկրյա ցողունների ձետափոխությունը՝ բույսի բիոլոգիական առանձնահատկությունների կապակցությամբ:

Դեմոնստրացիա: ցողունի միկրոսկոպիկ կառուցվածքը (լայնքի և յերկայնքի կարգածքները):

Լաբորատոր պարագամունքներ. 1) Ժյուղի արտաքին կազմության, բողբոշի կազմության, բողբոշների դասավորման, բողբոշներից շիվի զարգացման ուսումնասիրությունը. ճյուղի տարիքի վորոշումը. 2) ցողունի կեղերի, բնափայտի, միջուկի մակրոսկոպիկ կազմությունը, 3) փոխադրող ճանապարհները ցողունի մեջ. 4) կոճղարմատի պալարի և կոճղեղի կառուցվածքը.

Դիտողություններ կենդանի անկյունում և տաճք. 1) դիտողություն ճյուղերի արձակման վրա. 2) դիտություն պալարի և կոճղի զարգացման վրա:

VI. Ծաղկի: Ծաղկավոր բույսերի բազմացումը (12 ժամ)

Առաջան բարագում: Ծաղկի կազմությունը: Փոշության և բեղմնալորժան եյությունը: Խաչաձև փոշության նշանակությունը: Խաչաձև փոշության որինակները բնության մեջ: Ծաղկ

կավիթթությունների գերը: Միջատների և քամու միջոցով փռացով բույսերի ինքնափոշության որինակները: Պողի առաջացումը: Պտուղների տեսակները և պտուղների ու սերմերի տարածումը: Խաչամերման նշանակությունը նոր սորտեր առաջացներու գործում: Ի. Վ. Միջուրինը և նրա աշխատանքը:

Բույսերի նոր սորտերի առաջացումը մարդու ձեռքով ժխտում և աստվածաշնչի այն առասպելը, թե բույսերն ստեղծված են աստծու ձեռքով՝ մարդու համար:

Վեգետատիվ բազմացում արմատների, ցողունների և տերենների միջոցով: Բուսաբուծությունն անդամիններով, շիվերով և պատվաստով:

Դեմոնստրացիա: 1) ծաղկափոշությունը, 2) բույսերի արմախաչման ձերեր (կենդանի որյեկտներ, աղյուսակներ) և նոր սորտեր դուրս բերելու արդյունքները (յեթե հնարավոր ե՝ կենդանի որյեկտներ, մոդելներ, աղյուսակներ):

Լաբորատոր պարագամունքներ. 1) ծաղկի կազմությունը, 2) պատկաստման պրակտիկ յեղանակները:

Եքսկուրսիա և վաղ գարնանը ծաղկող բույսերի բիոլոգիա նյութի շուրջը:

Դիտողություններ կենդանի անկյունում և տաճք. 1) ծաղկի և պարագամությունը, 2) տնային բույսերի բազմացումը շիվերով:

VII. Բույսերի աճումն ու զարգացումը: V դասարանի դասընթացի կրկնողություն (9 ժամ)

3240

Բույսի աճումը: Արմատի ցողունի և տերենի աճման առանձնահատկությունները: Բարեխառնության, խոնավության, լույսի և հողի սննդաբար նյութերի աղղեցությունն աճման վրա: Բույսի զարգացումը: Բույսի զարգացման ստաղիաները: Միամյա, յերկամյա և բազմամյա բույսեր: Դարնանացան և աշնանացան բույսեր: Բույսերի զարգացման կանոնավորումը: Յարովիդացիայի նշանակությունը: Բույսի զարգացման դեկավարումը գյուղատնտեսական պրակտիկայում ջախջախում և այն ուսմունքը, ըստ վորթի բույսի զարգացման վրա ազդում են գերբնական ուժերը:

Դեմոնստրացիա: կենդանի և հերբարային նմուշների, ինչպես նաև աղյուսակների բույսի զարգացման ընթացքը ցուցադրով:



Դիմոդություններ և փոքրձեր կենդանի անկյուն
նում, վորոնք պարզաբանում են բարեխառնության, խոնավության, բույսի և հողի սննդաբար նյութերի աղջկությունը աճման ու դարձացման վրա:

Եքսկուսի սիածի ջեղակի ջերմոցային տնտեսություն՝ բույսի գարզացումը կանոնավորելու միջոցառությունները ցույց տալու համար Եքսկուսի գեղակի բնություն:

VIII. Նախապատրասություն ամառային աշխատանիւթյուն (2 ժամ)

Յուցումներ բույսերի հավաքման և նրանց չորացման (հերթակացիայի) յեղանակների մասին:

ՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ԲՈՒԽԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (39 ժամ)

Վաղկափոր բույսերի կարեվորագույն ընտանիքները
(20 ժամ)

Գաղափար ծաղկավոր բույսերի սիստեմատիկայի մասին:
Առաջի մասին: Ծանոթություն ծաղկավոր բույսերի հետևյալ ընտանիքների ներկայացուցիչների, նրանց բիոլոգիական առանձնահատկությունների և անտեսական ոգտագործման հետ:

Դաս 1-ին: Յերկացիներ: Յենթադաս Ա.՝ բաժանաթերթեր, Ըստանիքներ, 1) հասնունկներ, 2) խաչածաղիկներ, 3) վարդածաղիկներ, 4) լորագիներ, 5) հովանոցավորներ: Յենթադասի միասնաթերթեր: Ըստանիքներ, 1) մորմաղիկներ, 2) բլթածաղիկներ, 3) բարդածաղիկներ:

Դաս 2-րդ: Միաշաքիներ: Ըստանիքներ, 1) շուշանաղիկներ, 2) շրթնածաղիկներ, 3) բարդածաղիկներ:

Լաբորատոր ալարապունքներ. ծաղկի և ծաղկավայրատուր պահպան որգանների՝ կարևորագույն ընտանիքների ներկայացուցիչների՝ կազմությունը (յուրաքանչյուր ընտանիքն ուսումնասիրելիս):

Ծաղկավոր բույսերի վորոշման պրակտիկան:

ԲՈՒԽԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՄԲԵՐԸ

(Վաղափար բույսերի սիստեմատիկայի մասին (5 ժամ):

I. ՍՏՈՐԻՆ ՍՊՈՐՄԱՏՈՒ ԲՈՒՅՍԵՐ

Բակտերիաներ—մանրագույն վոչկանաչ բույսեր: Նրանց անտեսական նշանակությունը: Մարդկանց և կենդանիների մեջ:

Համաճարակների տոաջացման ընական պատճառները: Դիմության պայքարը վարակիչ հիվանդությունների մասին կրօնական նախաղացարմունքների դեմ: Բակտերիայի հնագարյանությունը:

Զրիմունները—վորակես կանաչ բույսերի ամենահին խումբը: Միաբնիջ զաղութային և բազմաբնիջ ջրիմունները: Զրիմունների կազմությունը, սնումը և բազմազումը: Գորշ և կարմիր ծովային ջրիմունները և նրանց ողտագործումը ժողովրդական տնտեսության մեջ: Զրիմունների ծագման հնագարյանությունը:

Սունկերը—վորակես քլորոֆիլազուրկ բույսեր: Ստորին և բարձր սունկերի կազմության, սնման և բազմացման առանձնահատկությունները: Ոգտակար սունկերի մշակումը: Պարագիտ սունկեր և պայքար նրանց դեմ: Սունկերի ծագումը:

Քարաքուններ: Քարաքունների արտաքին ձևը և ներքին կազմությունը: Քարաքունի կազմության յուրահատակությունը, սունկի և ջրիմունի համակցությունը: Քարաքունի նշանակությունը բնության մեջ և ժողովրդական տնտեսության մեջ:

II. ԲՍ. ԲՋՐԱԿԱՐԳԻ ՍՊՈՐՄԱՏՈՒ ԲՈՒՅՍԵՐ

Մամուններ: Տերեվացողունային մամունի արտաքին կառուցվածքը: Մամունների սվիլի բարձր կազմակերպվածությունը ստորին սպորավոր բույսերի համեմատությամբ: Մամունների բազմացումը և զարգացումը: Տորֆային մամուններ և տորֆի առաջացումը: Մամունների ծագումը հնագործան ջրիմուններից:

Զարիսուակ կերպություն (ձարխոտեր, ծիածետներ, գետնամուշեր) վորակես ամենաբարդերը սպորատու բույսերից (ունին տերեկալոր ցողուն և բնկական արմատներ): Զարխոտերի բազմացումն ու զարգացումը: Բուծո ձարխոտեր, ծիածետներ, գետնամուշեր: Յարածիսի առաջացումը: Բույսերի բուծո մնացորդները վկայում են բուսական աշխարհի հնության մասին և խորտակում են ասովածաշնչի առաջարկը յերկրի միայն 7000-ամյա գոյության մասին:

III. ՍԵՐՄԱՎՈՐ (Ճաղկափոր) ԲՈՒՅՍԵՐ

Մերկասերմեր: Սոճին վորակես մերկասերմերի որինակ: Սոճու բիոլոգիան: Ծաղկի կազմության առանձնահատկություններ:

ըլք: Գինեկան վորպես բարձրակաշուղ բույսերի հնության կենդառ
նի վկա:

Ծածկասերմեր Երևանության վորպես բույսերի հնության կենդառ
աշխարհի նորագույն խումբը Նրանց ձևերի և հարմարվածության
բազմազանությունը գոյության զանազան պայմաններին:
Բույսերի աստվածային ծագման և նրանց անվոփոխության
մասին կրոնական ուսմունքի վոչպիտական լինելը: Բուսական
աշխարհի ծագումը և զարգացման պատմությունը:

Կուլտուրական ծաղկավոր բույսերի ծագումը: Մարդու և
ստեղծել կուլտուրական բույսերը վայրենիներից, և վոչ թե
աստված և ստեղծել ճարանց «մարդու պետքերի համար», ինչ-
պես այդ մասին կրոնն և ասում:

Լաբորատոր պարագմունքներ. ծանոթություն
բուսական աշխարհի տարբեր խմբերի ներկայացուցիչների հետ
(բաժանելու համար նյութերի վրա):

Դեմոնստրացիա՝ բակտերիաների, ջրիմուռների, սուն-
կերի, քարաքոսների, մամուռների, ձարխոտակերպների, մեր-
կասերմ և ծածկասերմ բույսերի ներկայացուցիչների (միկրո-
պրեպարատներ և բնական որյեկաններ՝ կենդանի և ներբարիս-
կան),

Աղյուսակների գեմոնստրացիա. բակտերիաներ,
ջրիմուռներ, սունկեր, քարաքոսներ, մամուռներ, ձարխոտակերպ-
ներ, մերկասերմեր և ծածկասերմեր:

ԿԵՆԴԱՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (39 Ժամ)

Ներածություն (3 Ժամ)

Կենդանաբանությունը գիտություն և կենդանիների մա-
սին: Կենդանական աշխարհի բաժանումը խմբերի (տիպ, դաս,
կարգ). տեսակ. մոտիկ տեսակների համախմբումը մեկ ընդհա-
նություն մեջ. մոտիկ մեռերի և ընտանիքների համախմբումը
և այլն (կոնկրետ որինակներով): Կենդանիների տեսակների ան-
փոփոխության ուսմունքի կրոնա-իդեալիստական արմատները:
Կենդանաբանական գիտելիքների նշանակությունը մեր
յերկրի բնական հարստությունների տերապետան գործում:

I. Նախակենդանիների ժիալը (7 Ժամ)

Նախակենդանիների ընդհանություն հատկանիշները ամյուրայի
և պարամեցիումի (հողաթափիկի) որինակի վրա վորպես միա-
բջիջ կենդանիներ: Նրանց կազմությունը (պրոտոպլազմա, կո-
րիզ, պարփակումներ) և կենսական գործունեյությունները (շար-
ժում, սննդառություն, ջնշառություն, արտաթորություն, գըր-
գռականություն, բազմացում):

Գաղափար այն պարզ կենդանիների մասին, վորոնք կանգ-
նած են կենդանիների և բույսերի սահմանում. մտրակավորնե-
րի կամ խարազանակիրների դասը (կանաչ եվգլինա) և նրանց
նշանակությունը բույսերի ու կենդանիների միջև միասնություն
հաստատելու գործում: Արմատոտանիների դասը (ամյուրա, խե-
ցիավոր արմատոտանիներ):

Ինֆուզորների դասը վորպես ամենաբարձր խումբը նախա-
կենդանիների մեջ:

Նախակենդանիների գերը ապահովաների առաջացման գործում
(կավիճ և ուրիշ կրաքարեր): Նախակենդանիները վորպես մարդու
և կենդանիների հիվանդություններ առաջացնողներ՝ մալարիայի
պարագիտը, դիղենտերիայի առյուծան, տրիպանդուման:

Էաքոր ատեր պատկանություն քնի ը. դիմուլ ինքուղամ
իւհան միկրոսկոպի տակ:
Նախակենդանիների վերաբերյալ կինոնկարի դիմում:

II. ԱՆԵԽՈՐԾԱՎՈՐՆԵՐԻ ՏԻՊ (6 ժամ)

Աղեմորշավորների ընդհանուր բնութափիրը քաղցրահամ ջրերի ճիգրայի որինակի վրա վորպես ստորին բազմաբջիջ կենդանիներ: Քաղցրահամ ջրերի ճիգրայի կազմությունը և կենսաձևը: Անսեռ և սեռական բազմացում: Կրցըրած մասերը վերականգնելու ընդունակության ցայտուն արտահայտությունը (ռեգեներացիա): Կապված նրա մարմնի կազմության համեմատական միակերպության հետ:

Ծովային պոլիպներ և մեղուզաներ. մեղուզայի զարգացումը սլուլիպից և նրա կազմության բարդացումը՝ կապված ազատ լուղալու կենցաղի հետ:

Կորալյան պոլիպներ. կըային կմախքի նշանակությունը՝ կապված ափնակոծության շերտում ազրելու պայմանների հետ: Կորալյների գերը յերկը կեղեի առաջացման պլոցեսում:

Լաբորատոր պարագաներ. 1) դիմուղությունները կամ դիմուղության լուրջում (դիմում խոշորացույցով), 2) ուղենիքացիայի փորձեր:

III. ՍՊՈՒՆԳՆԵՐԻ ՏԻՊ (1 ժամ)

Քաղցրահամ ջրի սպունգը (բադյագ) վորպես սպունգների տիպի ներկայացուցիչ. նրա կազմությունը և զարգացումը: Ծովային սպունգների բազմազանությունը: Սպունգների կազմությունը՝ կապված նրանց նստակյաց կենցաղի հետ:

Սպունգների և աղեխորշավորների պազակցությունը գաղութային մտրակավոր նախակենդանիների հետ: Միաբջիջ ստադիան բազմաբջիջ կենդանիների զարգացման մեջ:

IV. ՎՈՐԴԵՐԻ ՏԻՊ (10 ժամ)

Վորդերի ձևերի բազմազանությունը. վորդերի տիպի բաժանումների առանձին յենթատիպերի:

Տափակ վորդերի յենթատիպը: Թալթչավոր վորդեր (պլանավակ), Պարաղիտատիպը (լերդուկ) (Այլդիմանական),

յերիզորդիպ: Նըանց զարգացման առանձնատեկությունները. տիպավոխությունը և զրաքիոլոզիկան նշանակությունը. պայտքարի բիոլոգիկան հիմունքներն այդ պարագիտաների դեմ:

Կոր վորդերի յենթատիպը Անկարիս, արիսինա. Նըանց կաղմության գլխավոր առանձնատեկությունները՝ կաղմած պարագայտին կենցաղի հետ. վարակման ձանապարհները և վարակման գեմ կանխիչ միջոցների բիոլոգիկայան հիմունքները:

Ողակավոր վորդերի յենթատիպը: Անձրևավորդը վորպես յենթատիպի ներկայացուցիչ. նրա արտաքին ու ներքին կաղմությունը՝ կապված կենցաղի հետ: Անձրևավորդի նշանակությունը հողագոյացման պրոցեսում: Համառոտ անդեկություններ տըզրուելների կազմության և կենցաղի մասին: Ավելի բարձր կաղմության նշանները ողակավոր վորդերի յենթատիպի ներկայացուցիչների մոտ (հյուսվածքների դիֆերենցիացիա և ոքանների սիստեմ):

Լաբորատոր պարագաներ. 1) դիմուղություն կենդանի անձրևավորդի վրա (շարժողության մեխանիզմ), 2) հերձում անձրևավորդի:

V. ՓԱՓԿԱՄԱՐՄԻՆԵՐԻ ՏԻՊ (4 ժամ)

Անտառմը (կոմ դետային մարդարտաբացին) վորպես փափկամարմինների տիպի ներկայացուցիչ. նրա կազմությունը՝ կապված կենցաղի հետ:

Թերախոփիկների դասի ընդհանուր հատկանիշները. մի քանի ձևերի արդյունագործական նշանակությունը (վուտրեները, մարդարտաբերը):

Փորոտանների դասը: Յամաքային և ջրային խխունջներ. Նըանց արտաքին կազմությունը և կենցաղը և խխունջները և կողմինջները վորպես զյուղատնտեսության վասատուններ:

Գլխոտանի փափկամարմինների դասը (սկզբաներ, ութոտանիներ) վորպես փափկամարմինների ամենաբարձր ձևը. Նըանց արտաքին տեսքը, շարժվելու յեղանակը և կենցաղը:

Փափկամարմինների նշանակությունը նստվածքային ապառների առաջացման մեջ: Փափկամարմինների բրածո ձեռքը (ամմոնիտներ, բիւնմիտներ): Կենցանիների բրածո մնացորդները վորպես համաշխարհային ջրհեղիդիք հետեանը ընդունող կրոնական հայացքների հակագիտականությունը:

Լաբորատոր պարագաներ. անատոմի հերձում:

Կրկնություն VI դասարանում անցած բուսաբանության և կենդանաբանության դասընթացի նյութի (8 ժամ):

ՅՈԹԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (78 Ժամ)

(Ներածություն 2 Ժամ)

ԿՐԻԱՆՌԵՐՅՈՒՆ և համառոտ ակնարկ VI դասարանում անցած
կենդանաբանական նյութի:

VI. Հողվածուանիների Տիպ (13 Ժամ)

Գետի խեցգետինը վորպես հողվածուանիների տիպի ներ-
կայացուցիչ. Նրա արտաքին ու ներքին կազմությունը՝ կապված
կենցաղի հետ: Կառուցվածքի բարդացումը ողակավոր վորգերի
համեմատությամբ. Խիտինե ծածկոցը և հատվածավոր վերջա-
վորությունները վորպես հողվածուանիների բնորդշ առանձնա-
հատկություն:

Հողվածուանիների տիպի բաժանումն առանձին դասերի
խեցեմորթների դասի ընդհանուր հատկանիշները: Մտորակարգ
խեցեմորթները (դաֆնիաներ և ցիկլոպներ) և նրանց նշանակու-
թյունը բնության կյանքում ու ձկնատնտեսության մեջ: Խեցե-
մորթների յերկրաբանական հնությունը:

Մտորակերպների դասի և բազմությունիների դասի արտաքին
կազմության և կենցաղի ամենազմաքայլոր և բնորոշ առանձնա-
հատկությունները.

Միջատների դասը: Միջատի արտաքին և ներքին կազմու-
թյունը: Բազմացման և զարգացման առանձնահատկությունները.
Արիլ և թերի կերպարանափոխություն ունեցող միջատները: Մի-
ջատների գլխավորագույն կարգերը և նրանց համառոտ բնու-
թագիրը՝ ըստ թերի ու բերանամասերի կազմության և ըստ
կերպարանափոխության յեղանակի:

Միջատների ձևերի բազմաթիվությունը և նրանց հարմա-
րությունը բազմազանությունը կյանքի տարրեր պայմաններին
Պաշտպանողական հարմարանքներ՝ հովանավորող գումարկորում

և պաշտպանող նմանություն: Նախաղղուշացնող կամ կանխիչ
գունավորում, միմիկրիա: Այդ հարմարանքների հարաբերական
նշանակությունը և ճնախամկընական նպատակահարմարության
բացակայությունը նրանցում: «Նախակըրքնական նպատակահար-
մարության» թեորիայի կրոնական արմատները:

«Հասարակական» միջատները: Մեղու, նրա բիոլոգիական
առանձնահատկությունները և նրա ոգտագործումը մարդու կող-
մաց: Մեղվի ընտանիքի ծագումը (մենակյաց մեղուներ, իշամե-
դուներ):

«Հասարակական» միջատների գիտակցական գործունեյու-
թյան մասին յեղած կրոնական և իդեալիստական պատկերա-
ցումների հակագիտականությունը:

Միջատների նշանակությունը բնության կյանքում և մար-
դու տնտեսության մեջ: Միջատները և ծագիկները: Միջատները
վորպես գյուղատնտեսության մնացատուններ: Միջատները վոր-
պես հիվանդություններ փոխանցողներ:

Վնասատուների բազմությամբ յերեան դալու բնական պատ-
ճառները և նրանց հետագա անհետացումը: Կրոնի այն պնդում-
ների հակագիտականությունը և մնացը, թե մնացատու միջատ-
ների մասսայաբար յերեան «առոտծու ցասումի» արտահայտու-
թյունն և վորոշ միջատների (հեծյալների և տախինա ձանձի)՝
գործունեյության ոգտակարությունը մարդու համար: Վնասատու-
միջատների գերմ մզգող պայմանակարգ միջոցները:

Հողվածուանիների կապն ողակավոր վորպերի հետ:

Լարորատոր պարապմունքներ: արտաքին զննում
և հերձում գետի խեցգետնի կամ խոզը միջատի (որինակ՝ ու
խավարասերի):

Եքսկուրսիա դեպի բանջարանոց, անտառ կամ դաշտ՝
միջատներ դիտելու և հավաքելու:

VII. Փօամորբների Տիպ (2 Ժամ)

Ծովասուղը վորպես փշամորթների տիպի ներկայացուցիչ:
Նրա արտաքին տեսքը և կենցաղը: Ձրանոթային համակարգը
վորպեր փշամորթների առանձին բնորոշ առանձնահատկություն:
Գաղափար փշամորթների տիպի առանձին դասերի մասին (ծով-
աստղեր, ծովողներ և ծոփաշոշաներ): Գշամորթների զարգա-
ցումը յերկողման համացափ թրմուներից:

VIII. Գորդավորների դաս (2 Ժամ)

Գանգազուրկների և վրզնաշարավորների յենթատիպերը նշտարիկը վորպես մի ձեւ, վորը մոտ և վորնաշարավորների հին նախնիներին («վորնաշարավոր առանց վողերի»):

Քորդավորների տիպի ընդհանուր բնութագիրը. 1) քորդավիր առկայությունը, 2) թիկնային նյարդային խողովակ, 3) խոկեային ձեղքերի առկայությունը հասուն ձեւերի կամ սաղմերի մոտ:

Զկների դաս (9 Ժամ)

Գետի պերկեսը վորպես ձկների դասի ներկայացուցիչ. Զըկների դասի բաժանումը կարգերի: Ճեղքախոփիկներ և ճարպաթեփի ձկներ. այդ կարգերի համեմատական հնությունը և նրանց ժամանակակից տարածումը. Վոսկրոտ ձկները վորպես ավելի ուշ խումբ, վորն իր ծաղկմանն և հասել յերկրի կյանքի ներկա շընչանում:

Ձկների բաղմացումը. ղրած ձվերի քանակի. և սերունդ պահպաներու բնազդի մեջ յեղած կատք: Արդյունազործական ձկնորսություն և նրա կազմը ձկների կյանքում յեղած սեղոնային յերեսութների հետ (ձկնորսության շրջանների ժամանակը): Ծովային ձկնորսություն և նրա զարգացումը. ԽՍՀՄ սոցիալիստական տնտեսության պայմաններում: Ձկնաբուծություն և ձային տնտեսություն:

Լաբորատոր պարագմունքներ. ձկան արտաքին դննում և հերձում:

Յերկենցաղների դաս (6 Ժամ)

Գորտը վորպես յերկենցաղների դասի ներկայացուցիչ. Նրա արտաքին և ներքին կազմությունը. համեմատություն զորատի և ձկան միջև. զորատի առանձնահատկությունները կապված ջրից ցամաք դուրս դալու հետ: Զրավաղանների առկայությունը վորպես գորտի գոյության պայման. զորատի բաղմացումը և շերեփուկի զարգացումը. Եերեխուկի ձկնակերպ կենդանու ստաղիայով անցումը վորպես արտացոլում. յերկենցաղների զարգացման պատմական պրոցեսի:

Յերկենցաղների բաժանումը պոչավորների և անպոչների

կարգերի և այդ խմբերի բնութագրերը՝ առանձին ներկայացուցիչների որևէ կանոնավոր վրա:

Հնագույն յերկենցաղները՝ ստեղոցի ֆալները՝ և նրանց կապը հին ձկների հետ և նրանց յերեան գալու պայմանները՝ Յերկենցաղների ծաղկումը քարածխային քարաշլջանում (միաժամանակյա զարգացումը՝ «յերկենցաղ» բուսականության): Յերկենցաղների հարմարման անկատարությունը ցամաքային կենցաղին:

Լաբորատոր պարագմունքներ. զորտի արտաքին դննում և հերձում:

Սողունների դաս (6 Ժամ)

Մողեսը վորպես սողունների դասի ներկայացուցիչ. Նրա արտաքին և ներքին կազմությունը՝ կապված կենցաղի հետ: Սողունների տարրերությունը յերկենցաղներից և նրանց ավելի բարձր կազմության գծերը: Սողունների բազմացման առանձնահատկությունները կապված լիակատար ցամաքային կենցաղին անցնելու հետ:

Սողունների բաժանումը կարգերի. այդ կարգերի համառոտ բնութագրերը առանձին ներկայացուցիչների որինակների վրա (մողեսներ, ոձեր, կոկորդիլոսներ, կրիաներ): Մնալու ձեւերի վերջավորությունների սուրբիմենտները (դեղնափորիկի, փիշապոձի), վորը ցոնց և տալիս այդ կենդանների չորքուանի սողուններից ծագած լինելը:

Սողունների ծագումը ստեղոցի ֆալներից: Ժամանակակից մողեսների գաղաթնային աչքը վորպես առանձնահատկություն՝ ժառանգված հին ստեղոցի ֆալներից: Սողունների ծաղկումն ու բաղմացանությունը մեղողյան (միջին) երայում (դինոզավրեր, ձկնամողեսներ, թոչող մողեսներ) և նրանց հետագա մահացումը: Կենդանական աշխարենի հնության վերաբերյալ գիտական տվյալների հակազրումն աստվածաշնչի այն ուսմունքին, թե աստված և ստեղծել կենդանիներին:

Սողունները, յերկենցաղները և ձկները վորպես կենդանիներ, վորոնք չունեն մարմնի կայուն ջերմություն: Բնի յերեսութը վորպես հարմարանք կյանքի պայմաններին:

Թուչունների դաս (14 Ժամ)

Թուչունի մարմնի արտաքին և ներքին կազմության առանձնահատկությունները՝ կապված նրա կենցաղի հետ (կոնկրետ

նրբնակով): Արտաքին նկարագիրը (փետրավորումը, կտուցը, վոտները, զգի ճկնությունը՝ մարմի համարյա կատարյալ անշարժության հետ միասին): Ներքին որդանները: Թռչունների կմանքի առանձնահատկությունները: Առջևի վերջավորությունների մասնագիտացումը և նրանց աշխատանքները թոփչքի ժամանակ: Թռչունների և սողունների կազմության ընդհանուր գծերը:

Չուն և նրա կազմությունը: Սաղմի զարգացումը ձվի մեջ, նորիկային ճեղքերի ոռոգիմենտները վորպես վկայություն, վոր ցամաքային վողնաշաբավորները ծագել են ջրային հին ձևերից, թռչունների և սողունների սաղմերի նմանությունը, վորը ցույց է տալիս նրանց մոտիկ ազգակցությունը:

Նախաթռչունները վորպես կապող ողակ թռչունների և սողունների միջև:

Ժամանակակից թռչունների դասակարգությունը: Տափակակուրծք և վողնուցակուրծք թռչունների յենթադասերը: Վողնուցակուրծք թռչունների շազմազանությունը՝ ստեղծված պատմական զարգացման պրոցեսում՝ միջավայրի զանազան պայմանների հարմարվելու և կեր հայթայթելու զանազան յեղանակ ների կապակցությամբ: Գաղափար վողնուցակուրծքների գլխավորագույն կարգերի մասին (սագակերպներ, գիշատիչներ, հավագլիներ, բվեր, ճնճղուկներ):

Թռչունների բազմացումը: Զվերի գունավորման և ձեի բիոլոգիական նշանակությունը: Բնախույս և բնակալ թռչուններ: Թռչունների չուն: Դրա բիոլոգիական նշանակությունը և ծագումը: Լաբորատոր պարագաների մասին (սագակերպներ, գիշատիչներ, հավագլիներ, բվեր, ճնճղուկներ):

Կարնասունների դաս (16 ժամ)

Կաթնասուն կենդանների առանձնահատկությունները վողնաշաբավորների այլ դասերի համեմատությամբ (կոնկրետ որինակներով). Ներքին և արտաքին կազմությունը, բազմացումը և զարգացումը: Կաթնասունների ձեւերի զանազանակերպությունը՝ կապված կենցաղի և ապրելու միջավայրի հետ՝ առաջացած պատմական դեմքությունը:

Միանցքանիների կամ ձվածինների յենթադասը (բաղակառուց, յիխիդնա) վորպես մի խումբ կաթնասուններին սողունների հետ կապող:

Հնագույն կաթնասունների հանդիս գալը միջին ելայի սկզբում և նրանց հավանական ծագումը հին գաղանամողեսներից: Պարկավորների յենթադասը վորպես կաթնասունների զարդացման տվյալի բարձր աստիճան (միանցքանինների համեմատությամբ): Պարկավորների ժամանակակից ծավալումը և նրանց ձևերի բազմազանությունն Ավստրալիայում՝ կապված այդ ցամաքամասի վաղ անջատման հետ:

Բարձրակարգ կաթնասունների յենթադասը: Բարձրակարգ կաթնասունների արագ ծաղկումը և մասնավորվելը յերբորդական դարշրջանում:

Միջատակերների կարգը վորպես մի խումբ, վորը պահպահներ և ամենամեծ մոտիկությունը հին բարձրակարգ կաթնասունների հետ (ատամնային ապարատի թույլ տարբերակումը, մանր չափսերը, հնգամատությունը և թաթագնացությունը):

Զղջիկների դասը վորպես մասնագիտավորված խումբ, վորը մոտիկ և միջատակերներին:

Կրծողների կարգը վորպես մի խումբ, վոր հարմարված և բացառապես բուսական կերպ սնվելուն: Կրծողների բիոլոգիական առանձնահատկությունները, վորոնցով պայմանավորվում են նրանց ծաղկումը ներկա գարագրանում: Կրծողները վորպես զյուղատնտեսության միասնական միավանական միջատակերները:

Մերակավորների կարգը: Մերակավորների ծաղկումը՝ կապված բաց տափաստաններ առաջանալու հետ. սմբակավորների ծագումը ձեռու որինակի վրա: Կնճիթավորների կարգի առանձնահատկությունները և նրանց ծագումն ավելի մանր և ավելի պակաս չափով մասնագիտացած ձեւերից:

Գիշատիչների կարգը և նրանց մեջ մտնող գլխավոր ընտանիքները: Թիսվոտանիների և կետազգիների կարգերը վորպես նիստիստ փոփոխված մասնավորված հետնորդներ հին գիշատիչ կաթնասունների:

Պրիմատների կարգը և նրանց առանձնահատկությունները: Կապիկները վորպես մազլցող կենդանիներ: Մարդը վորպես պրիմատների կարգի անդամ. մարդու կազմության այն գծերը, վորոնցով նա տարբերվում ե կենդանիներից:

Ընտանի կաթնասուններ: Ընտանի գլխավոր կենդանիների (շան, կովի, վոլխարի, խողի) ծագումը: Ընտելացման և ընտանիցման բիոլոգիական հիմունքները. ընտանի կենդանիների ըեղերի զանազանակերպությունը և արհեստական ընտրության

Նշանակությունը՝ կենդանինելի ընտանեցման և նոր ցեղեր ստեղծելու վերաբերմամբ մարդու պրակտիկ գործունեյության նշանակությունը։ Կրօնական պատկերացման անհեթիթությունը այն մասին, թե ընտանի կենդանիներն ստեղծված են «մարդու պետքերի համար» և թե կենդանիների տեսակներն անփոփոխ են։

Վորորդություն։ Գազանաբուծությունը վորապես սոցիալիստական կենդանաբուծության մի նոր ճյուղ։ Բնության պահպանությունը և ԽՍՀՄ-ի ֆառնայի վերակառուցման խնդիրը։

Լաբորատոր պարագանեւն քններ, հերձում մանր կաթասունի (կրծողի; կատվի)։

Եքսկուրսիա դեպի կենդանաբանական թանգարան (քաղաքում) կամ անասնապահական տնտեսություն (գյուղում)։

Ամփոփում յեվ կրկնություն (8 ժամ)

Դասընթացի կրկնություն և ընդհանրացում։

Կենդանական աշխարհի զարգացումը։ Դաշտավար վորփառականության և ժամանականության մասին։ Տեսակների կայունության մասին յեղած ուսմունքի կրօնակերպարագությունը։ Փոփոխակները վորապես նախանշվող տեսակներ։ Մարդու կողմից կիրառվող արհեստական ընտրության եյությունը։ Բնական ընտրությունը բնության մեջ վորապես ընտրություն որգանիզմի համար ոգտակար ժառանդական փոփոխությունների։ Կատարված սեղունդների անհամար շարանում, դրյության պայքարի պրոցեսում։

ՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ՄԱՐԴՈՒ ԱՆԱՏՈՄԻԱՆ ՑԵՎ ՑԻԶԻՈՂԻԱՆ

(78 ժամ)

ՆԵՐԱԾՈՒՅՈՒՆ (1 ժամ)

Մարդու անատոմիան և ֆիզիոլոգիան և նրա խնդիրները։ Մարդու և կենդանիների նմանությունն ու տարբերությունն Պարծիքներ արտադրելու ու գործածելու վորապես մարդու տարբերիչ գծեր։ Մարդու անատոմիայի և ֆիզիոլոգիայի ուսումնասիրության նշանակությունը կրօնի և իդեալիզմի դեմ մզվող պայքարում։

I. Բջիջ յեվ նյուսվածքներ (5 ժամ)

Բուսական և կենդանական բջիջների կազմության նմանությունն ու աարբերությունը։ Կորիզի, պրոտոպլազմայի և թաղանթի գերը կենդանական բջիջի մեջ։ Բջիջների բաժանումը։ Կենդանական հյուսվածքների կազմությունը՝ ծածկությունն շարակցական (կրծիկային) և մկանային հյուսվածքային որինակների վրա (բջիջներ, միջրջային նյութ, սինցիտաներ)։

Համառոտ տվյալներ որգանիզմների բջիջային կազմության ուսմունքի պատմությունից՝ որգանիզմի մասին իդեալիստական և միխանիստական պատկերացումների դեմ մզվող պայքարի լույսի տակ։

Լաբորատոր պարագանեւն քններ և գեմոնստրացիան միլլուսկուլոպիտական պարապմունքներ բջիջի և հյուսվածքների ծանոթության վերաբերմամբ։

II. Վուկրա-մկանային սիստեմը (8 ժամ)

Վուկրա-մկանային սիստեմի նշանակությունն որգանիզմի համար։ Համառոտ տեղեկություններ գիտության և կրօնի պայքարի պատմությունից։

Մարդու և վողնաշարավոր կենդանիների կմախքի կազմության միջև յեղած նմանությունը: Մարդու կմախքի կազմության առանձնահատկությունները՝ կապված մարմնի ուղղահայց դիրքի հետ (գանդը, վողնաշարը, կոնքը, թաթը, ձեռքի դաստակը):

Վոսկրեսի միացումն իրար հետ: Հոգերի կազմությունը, վոսկրեսի բաղադրությունը և կազմությունը: Վոսկրամաշկի դերը: Մկանների ամրացումը վոսկրեսին: Կմախքի մկանները և ներքին որդանների մկանները: Կծկումը վորպես մկանների հիմնական հատկություն: Գաղափար մկանի հոգնածության մասին: Ոլիթմի և բեռնվածության նշանակությունը մկանների աշխատանքի մեջ: Մկանների նորմալ գործունեյության պայմանները (թթվածնի, սննդարար նյութերի մատակարարում, քայլայման արդյունքների հեռացում): Մկանային գործունեյության աղբեցությունը մկանային սիստեմի և ամբողջ որգանիզմի վրա:

Լաբորատոր պարապմունքներ և դեմոնստրացիաներ. 1) կմախք, կամ կմախք ու մկաններ պատկերող աղյուսակներ. 2) այրած և կրազատված վոսկրի դեմոնստրացիա. 3) դիտողություն մկանների կծկումների՝ գործի սրունքի անշատած մկանի վրա:

III. Արյան ցրջանառություն (10 ժամ)

Արյան ցրջանառության նշանակությունն որգանիզմի համար: Արյան ցրջանառության հայտնարկման պատմությունը: Գիտական ֆիզիոլոգիայի դեմ յեկեղեցու մղած պայլայրի պատմությունից վառ միջազգեակեր (Վեղալի, Սերվետ, Հարվի):

Արյան բաղադրությունը: Պլազմա և ծեսավոր տարրեր: Ածխաթթու գազի և թթվածնի փոխադրությունն որգանիզմի մեջ: Արյան կարմիր և սպիտակ մարմնիները և նրանց նշանակությունը: Արյան մակարդման պրոցեսը: Գաղափար իմունիտետի մասին:

Սրտի կազմությունը: Զարկերակներ: Յերակներ: Մազանոթներ: Նրանց նշանակությունը: Արյան և ավիշի ցրջանառության ընդհանուր սքեմը: Ավիշի առաջացումը: Արյունն ու ավիշը վորչպես միջավայր բջիջների և հյուսվածքների համար: Սրտի աշխատանքը և որգանների արյունով լցվելը՝ որգանիզմի հանգստի և զանազան գործունեյության ժամանակ: Սրտի մարդանքի նշա-

նակությունը: Սրտի գերհոգնածությունը և այն կանխելու միացուները:

Լաբորատոր պարապմունքներ և դեմոնստրացիան արյան գործուների տակ. 1) արյան քսուկի պատրաստումն և դիտումը միկրոսկոպի տակ. 2) գործի թթվաթաղանթի մեջ արյան դիտումը միկրոսկոպի տակ. 3) ստանալ փիբրինաղըկած արյուն. 4) արյան գունավորման փոփոխվելը թթվածնի և ածխաթթու գազի աղյուսակների տակ. 5) կաթնասուն կենդանու սրտի հերձումը. 6) արյան և ամիշաշլանառության աղյուսակի ցուցադրում:

IV. Շնչառություն (5 ժամ)

Շնչառության նշանակությունն որգանիզմի համար:

